

անկախութենէ մը, այլ նաեւ իրենց կիսանկախ դրութիւնն այլ կը վտանգուէր յաճախ՝ Հայաստան բաժնուած ըլլալով տեղական ինքնավարութեանց, եւ իւրաքանչիւր շրջան սովորած ըլլալով վարել արտաքին անջատ քաղաքականութիւն: Արտաշէս հիմը դրաւ պետական միութեան:

Այդ պետութիւնը, հիմնուած հարուստ եւ արդաւանդ դաշտի մը վրայ, հաստատուած էր միջազգային այն կարեւոր առեւտրական եւ ռազմական ճամբաներուն վրայ, որոնք ամէն կողմէ կը հաւաքուին հոն, Արարատեան դաշտը, Արաքսի հովիտը: Հոն այլ կառուց իր մայրաքաղաքը, Արտաշատ անուանով:

Յունական աղբիւրները կ'ըսեն, թէ քաղաքի տեղն ընտրուին եղաւ զինուորական խոշոր տաղանդ մը, Աննիրազ, որ Հոռոմէն պարտուած՝ անցեր էր Փոքր Ասիա եւ ասպնջակառութիւն դասեր հայոց թագաւորի մօտ:

Մարարուն «գեղեցիկ» կ'անուանէ Արտաշատը, որ շինուած էր Արաքսի մէկ զարձուածքին վրայ, երեք կողմէն շրջապատուած ջուրով, իսկ չորրորդ կողմէն պարիսպներով, խրամատով եւ բլուրով մը (Strabon, livre XI, Chapitre XIV): Իսկ Պլուտարքոս աւելի մեծ ոգեւորութեամբ կը գովէ Աննիրազի այդ ձեռակերպը, զայն անուանելով «մեծ» եւ «գեղեցկագոյն» (Պլուտարքոս, Զուգակշիւք, Վենետիկ, 1833, հատոր Գ. էջ 580):

Արտաշէս չքաւականացաւ ստեղծելով զօրաւոր պետութիւն մը եւ իրեն կցելով հայկական բոլոր մեծ ու սղօտիկ իշխանութիւնները, ան ճգնեցաւ նաեւ ստեղծելու հայ ժողովուրդի ներքին, բարոյական միութիւնը: Ինք էր, որ մտցուց զինուորական կարգերը, կազմակերպեց ազգային դաստիարակութիւնը, կարգի ենթարկեց ազնուականութիւնը, հաստատեց իրաւական կարգեր: Բայց զօրաւորագոյն կապը, որով այս հանճարեղ հիմնադիրը իր նոր գրաւած երկիրները եւ զանազան ցեղերը իրարու հետ միացուց, եղաւ մի միակ ազգային լեզուի մը զործածութիւնը մայրները, ինչպէս կ'ըսէ Մարարուն:

Ու Արտաշէս Վեր, որ սնած յունական դաստիարակութեամբ, հիմը դրաւ Հայաստանի մէջ հելլէն մշակոյթին, այնպէս որ իր յաջորդ-

ները պարծանքով մը իրենց արքունիքը կը հրաւիրէին ու կը պահէին յոյն գիտնականներ ու արուեստագէտներ: Արտաշէսով կը սկսի դարձեալ հելլէն աստուածներու եւ արձաններու մուտքը Հայաստան:

Պատմութեան մէջ որոշ փաստերու չենք հանդիպիր հայ թատրոնի մը գոյութեան՝ այդ շրջանին: Բայց հիմք ունինք ենթադրելու, թէ եթէ չկար հայ թատրոն, գոնէ հելլէն ողբերգութիւնները անձանօթ չէին հայերուն: Նախ՝ այնպիսի շրջան մըն էր այդ, երբ արգէն վաղուց իր ծաղկման բարձրութեան հասած էր հելլէն թատրոնը, եւ իր հրապոյրը տարածած Փոքր Ասիոյ կէս-յունական երկիրներուն մէջ:

Արտաշէս այդ երկիրներէն հելլէն մշակոյթի գանազան արտայայտութիւնները Հայաստան ներմուծած ատեն, չէր կրնար գանց ընել նաեւ գերասաները: Մանաւանդ որ Արտաշէս իր աւելի քան երեսուն տարուան տիրապետութեան շրջանին՝ միայն զինուորական կամ քաղաքական ուժ եւ դիմագիծ չունեցաւ, այլ նաեւ սիրահար հանդիսացաւ գեղեցկութեան, ճոխութեան, շքեղութեան:

«Գեղեցկագոյն» եւ «մեծ» էր իր մայրաքաղաքը, բայց աւելի շքեղ եղաւ իր վարած կեանքը: Իր վրայ է հիւսուած հայկական ամենահին հէքեաթներէն մէկը, որ կը պատմէ թէ ինչպէս Արտաշէս յաղթեց Ալաններու արքային, ինչպէս գերի վարեց Սաթենիկ արքայազուստը, եւ ի՞նչ հարսնիք սարքեց Սաթենիկին համար:

Հէքեաթը կ'ըսէ, թէ Արտաշէսի եւ Սաթենիկի հարսնիքին ատեն անձրեւի պէս ոսկի ու մարգրիտ կը տեղար (Սորենացի, Ա. գիրք, գլուխ 1.): Ու յետագայ դարերու պատմիչ մը, Թովմաս Արծրունի (Ժ. դար), արձագանգը կ'ըլլայ ուրիշ հէքեաթի մը, որ կ'ըսէ, թէ Արտաշէս Սաթենիկին համար իբր աշնանային պալատ Արտամէտ քաղաքը շինեց Վանայ լճի ափին, զարդարելով զանիկա պարտէզներով, ճեմելիքներով, ծաղկաստաններով եւ այլ գեղեցիկ յարմարութիւններով: Ասկէ զատ Արտաշէսի անմիջական յաջորդները իրենց կարգին քաղաք կը կանգնեն ու զայն կ'օժտեն թատրոնով: Անոնք սկսեցին վաղուց ստացած ըլլային թատրոնի ճաշակը: